

Richmond

Յուլի 7, 1953

Մեծա յարգ
Տիար Արամ Կարապետեան
Ատենապետ Հոգաբարձութեան
Ռիչմոնտի Հայ Եկեղեցւոյ
Ռիչմոնտ:

Սիրելի Պր. Կարապետեան,

Ստացած ենք Անդամական Ժողովիդ նախագահ Հոգ. Տնորհք Մ. վարդապետի տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիք թէ կատարուած է ծուխիդ Հոգաբարձութեան ամբողջական ընտրութիւնը, եւ կը խնդրէիք որ վաւերացնենք զայն: Կը տեղեկացնէիք նաեւ որ Հոգաբարձութիւնը պիտի ստանձնէ Եկեղեցւոյ եւ Սրահի Շինման կամ Գնման Յանձնախումբի պաշտօնը:

Այս կարգադրութիւնը մեզ եւս լաւագոյն կերպը կը թուի ծուխիդ գործերն յառաջ տանելու:

Ուստի նկատի առնելով ընտրուած անձերու Եկեղեցւոյն ծառայելու ազնիւ պատրաստակամութիւնը եւ Անդամական Ժողովին եւ մեր անոնց վրայ ունեցած վստահութիւնը, կը վաւերացնենք զանոնք ըսդ հետեւեալին.-

- Տիարք Ճէք Միսիրեան
- Զարլս Աշճեան
- Յարութիւն Տարխանեան
- Արամ Կարապետեան
- Բիթ Կրիյն
- Յարութիւն Տիրատուրեան
- Ճէք Կարոյեան

Այս անձերը պիտի վարեն թէ Հոգաբարձութեան եւ թէ Եկեղեցւոյ Շինման եւ Գնման Յանձնաժողովի պաշտօնը:

Մաղթելով ամէնուր կարողութիւն եւ յաջողութիւն ի Տեառնէ

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ